ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2020թ. հոկտեմբերի 8-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Ձայնագրության հղումը՝ https://drive.google.com/drive/folders/0B--pc7f85FrdflIyVlExbW5Fa3RSQm5oalZMTGxHNkRtSEl1NjBfcDVhX1dwVEVtdmN2dU0

Օրակարգ

1. Ուսումնական գործընթացի մասին հակիրճ տեղեկատվություն՝ առկա խնդիրներ և ձեռքբերումներ /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
2. ՀՊՄՀ-ի կողմից անցկացվելիք օլիմպիադայի հարցաշարերի պատրաստման մասնակցության մասին տեղեկատվություն /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
3. Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտամեթոդական գործունեության մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
4. Ամբիոնի լաբորանտ Ստելլա Մելիքյանի կողմից իրականացված գիտական ուսումնասիրությունների մասին ելույթ /10 րոպե/
5. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ուսումնական գործընթացի ընթացքում առկա խնդիրների ու ձեռքբերումների մասին: Դասախոսները հակիրճ ներկայացրեցին իրենց կողմից իրականացվող աշխատանքները հեռավար և առերես դասընթացների շրջանակներում: Նշվեց, որ ընդհանուր առմամբ ուսանողները բավարար չափով մասնակցում են առցանց և առերես դասերին: Խնդիրներից նշվեց հեռավար ձևի, այնուամենայնիվ, ոչ լիարժեք փոխարինումն առերես դասերին: Ա. Առուստամյանը նշեց, որ իր անցկացրած դասերին մասնակցում են սակավաթիվ ուսանողներ, որի պատճառը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի: Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ կազմվելու է փոխադարձ առցանց դասալսումների ժամանակացույց, որոնց արդյունքները կամփոփվեն համապատասխան մատյանում:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Կազմել փոխադարձ դասալսումների ժամանակացույց:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ՀՊՄՀ-ի կողմից անցկացվելիք օլիմպիադայի հարցաշարերի պատրաստման մասնակցության մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ դասախոսների մի մասն ուղարկել է օլիմպիադայի հարցերը, մյուսը՝ ոչ: Ամբիոնի վարիչը հանձնարարեց այն դասախոսներին, ովքեր չէին ուղարկել հարցեր, մեկ օրվա ընթացքում մշակել և ներկայացնել օլիմպիադայի համար նախատեսվող հացերը և/կամ խնդիրները:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի դասախոսների կողմից իրականացվող գիտամեթոդական գործունեության մասին: Դասախոսները ներկայացրեցին 2020 թվականի ընթացքում իրենց կողմից հրատարակած և տպագրության ուղարկված աշխատանքներն ու գիտական գործունեությունը: Ս.Պիպոյանը նշեց, որ հարկավոր է ակտիվացնել դասախոսների գիտամեթոդական աշխատանքների մասնակցությունը, դրանում ներգրավվելով նաև ուսանողներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ իր կողմից իրականացված գիտական ուսումնասիրությունները կներկայացնի ամբիոնի լաբորանտ Ստելլա Մելիքյանը: Ս.Մելիքյանը ներկայացրեց իր կատարած հետազոտությունների արդյունքները:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Ա.Առուստամյանը, Վ.Հովսեփյանը, Լ.Համբարձումյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

Հանձնարարվեց՝

Ս. Մելիքյանը իր կողմից կատարված աշխատանքները քննարկի Մ. Երիցյանի, Ա. Առուստամյանի, Վ. Հովսեփյանի,Լ. Համբարձումյանի հետ՝ հնարավոր թերությունները շտկելու և իր աշխատանքների կատարման որակը բարելավելու նպատակով:

5. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ իրենց կողմից կատարած աշխատանքները կներկայացնեն ամբիոնի հայցորդները: Հայցորդները ներկայացրեցին իրենց աշխատանքները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնն ունի նոր ասպիրանտ՝ Հակոբյան Լիլիթ, որի ատենախոսության թեման պետք է որոշվի ու հաստատվի ամբիոնի կողմից: Ասպիրանտը ներկայացրեց «Կոմպլեքս միացությունների ուսուցման

առանձնահատկությունները բուհական դասընթացներում» վերնագիրը որպես նախնական և տեղեկացրեց, որ իր համար ղեկավար է ընտրել ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր, քիմիական գիտությունների դոկտոր Ռոմիկ Սուրենի Հարությունյանին: Ս.Պիպոյանը հանձնարարեց ամբիոնի քիմիկոսներին քննարկել նշված թեման և վերջնական տարբերակ առաջարկել հաստատման համար:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Տ.Թանգամյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն և մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել համապատասխան առաջարկություն:

7. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա ավարտական աշխատանանքերի և մագիստրոսական թեզերի վերնագրերի մասին: Ամբիոնի վարիչը հանձնարարեց դասախոսներին պատրաստել և ուղարկել աշխատանքների նախնական վերնագրերը մինչև 09.10.2020թ.: Բացի այդ, ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ միայն տեսական և տարբեր աղբյուրներից արտագրված աշխատանքները չեն երաշխավորվելու հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն:
- Ընդունել ի գիտություն:

8. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի քննարկման է ներկայացվում «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձնկաշխարհը» (հեղինակներ՝ Ա.Ս.Առաքելյան, Ս.Խ.Պիպոյան) վերնագրով մենագրությունը, որը նախապես գրախոսման է տրվել ամբիոնի դասախոս Ա. Զիրոյանին: Ստացվել է դրական կարծիք և մենագրությունը ներկայացվելու է կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհուրդ՝ քննարկման նպատակով:

Որոշեցին՝

Ա.Ս.Առաքելյանի և Ս.Խ.Պիպոյանի «ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձնկաշխարհը» մենագրությունը ներկայացնել կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը:

9. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի դասախոսները երաշխավորում են իրենց հրատարակած դասագրքերը ուսանողներին՝ գնելու համար: Ամբիոնի վարիչը հորդորեց դասախոսներին զերծ մնալ նման քաղաքականությունից:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

2020թ. նոյեմբերի 6-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Ձայնագրության հղումը՝
https://drive.google.com/file/d/10QvOxr57BhID_vYTIFuv1HxSagxXnLO6/view?usp=sharing

Օրակարգ

1. Գործնական և լաբորատոր աշխատանքների կազմակերպման ու իրականացման գործընթացի մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
2. Փոխադարձ դասալսումների արդյունքների մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
4. Մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ու իրականացման արդյունքներ և հիմնախնդիրներ /զեկուցողներ՝ պրակտիկաների ղեկավարներ՝ Ա. Բաբախանյան, Մ. Քոչարյան, Ն. Հարությունյան, Մ. Դալլաքյան/
5. Ամբիոնի դասախոս Մարինե Դալլաքյանի կողմից իրականացվող գիտական աշխատանքների մասին ելույթ /մինչև 10 րոպե/
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը գործնական և լաբորատոր աշխատանքների կազմակերպման ու իրականացման գործընթացի մասին: Դասախոսները անդրադարձան իրենց կողմից իրականացված ուսումնական գործընթացի առանձնահատկություններին և այդ ընթացքում առաջացած խնդիրներին: Նշվեց, որ ուսումնական գործընթացը բնականոն է ընթանում, իսկ լաբորատոր աշխատանքների առումով կենդանի շփման բացակայության ու լաբորատոր փորձերի հեռավար անցկացումը դեռևս լիարժեք արդյունավետ չէ: Այդ առումով նշվեց, որ նպատակահարմար է ձեռք բերել էլեկտրոնային լիցենզավորված ծրագրեր, օգտագործել էլեկտրոնային գրատախտակը, որի հնարավորությունը տալիս է էլեկտրոնային հանդիպումների հարթակը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Հանձնարարել դասախոսներին պատրաստել զեկուցագիր ծրագրերի ձեռքբերման համար:

2. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը փոխադարձ դասալսումների արդյունքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից իրականացված դասալսումները: Նշվեց, որ դասերը հագեցած են ցուցադրական նյութով, դասերի ժամանակ կիրառվում են հետաքրքիր մեթոդական մոտեցումներ, ինչը ողջունելի է, սակայն, այնուամենայնիվ, կարևորվեցին առերես դասերը: Արձանագրվեց, որ դասախոսների կողմից արվում է առավելագույնը բնականոն ուսումնական գործընթացի իրականացման համար: Ամբիոնի վարիչը հանձնարարեց ստեղծել դասալսումների անցկացման էլեկտրոնային մատյան, որտեղ կտեղադրվեն կատարված դասալսումների արդյունքները և հասանելի կլինեն բոլոր դասախոսների համար, ովքեր կցանկանան տեսնել դրանք:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն և ի կատարումն:

3. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականացվող աշխատանքների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից ղեկավարվող աշխատանքների ընթացքը: Համավարակի հետ կապված դժվարություններ են առաջացել ուսանողների կողմից գիտահետազոտական հիմնարկների հաճախման ու գործնական աշխատանքներ կատարելու առումով: Նշվեց, որ ներկայում ուսանողներն աշխատում են գրական տվյալների հավաքագրման վրա, և աշխատանքներն ըստ էության ընթանում են նախատեսված պլանի համաձայն:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ու իրականացման արդյունքների և հիմնախնդիրների մասին: Խնդիրներից նշվեց պրակտիկայի առցանց կազմակերպումը, դպրոցի ընտրությունը, քանի որ խմբերը չեն կցվում հստակ որևէ դպրոցին (ընտրությունը տրվում է դասախոսներին): Ամբիոնի վարիչը բարձրաձայնեց, որ կան ուսանողներ, ովքեր իրականացնում են կամավորական աշխատանք, որը ներառում է նաև մանկավարժական գործունեություն կամ մասնագիտական աշխատանք աշակերտների հետ: Մասնավորապես, ուսանողներն իրականացանում են մասնագիտական առարկայի դասավանդում: Ուստի, անհրաժեշտ է բացի կամավորական աշխատանքի համար միավոր տրամադրելուց, եթե նման աշխատանքը համապատասխանում է նաև մանկավարժական պրակտիկայի բովանդակությանը և պահանջներին, համապատասխան փաստաթղթերի և քննող հանձնաժողովի եզրակացության առկայության դեպքում դա համարել մանկավարժական պրակտիկայի մաս:

Արտահայտվեցին՝

Ա.Կիրակոսյան, Մ.Քոչարյանը, Ռ.Սիմոնյանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ներկայացնել զեկուցագիր մանկավարժական պրակտիկայի հետ կապված:

5. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ իր կողմից կատարած աշխատանքները կներկայացնի ամբիոնի դասախոս Մարինե Դալլաքյանը: Մ.Դալլաքյանը հակիրճ ներկայացրեց իր կողմից կատարած գիտական աշխատանքները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ սկսվել է դասաժամերի վերաբաշխման գործընթացը, որը կներկայացնի ամբիոնի մասնագետ Ա.Փիլթակյանը: Ա.Փիլթակյանը ներկայացրեց առկա իրավիճակը և դասաժամերի բաշխումը:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Ա.Կիրակոսյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

7. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի հայցորդ Ա.Խաչիկյանը ցանկանում է հանձնել մինիմումի քննություն մասնագիտական առարկայից: Ամբիոնի վարիչը հանձնարարեց Ա.Բաբախանյանին նայել Ա.Խաչիկյանի աշխատանքը և տալ համապատասխան եզրակացություն, արդյոք պատրաստ է աշխատանքի 80%-ը թե ոչ՝ հայցորդին մասնագիտական քննության թույլատրելու համար:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

8. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ֆակուլտետում անցկացվել է օլիմպիադա կենսաբանության և քիմիայի գծով: Տ.Թանգամյանը ներկայացրեց օլիմպիադայի արդյունքները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

9. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի դոցենտ Մ.Քոչարյանը ամբիոնին է ներկայացրել իր կողմից 2017 թվականին հրատարակած «Անողնաշարավորների կենդանաբանություն» ուսումնական ձեռնարկը՝ վերահրատարակման նպատակով: Ձեռնարկում կատարվել են շտկումներ, փոփոխություններ, լրացումներ: Ամբիոնի

վարիչն առաջարկեց Մ.Քոչարյանին ամբիոն ներկայացնել 3 կարծիք մասնագետների կողմից աշխատանքի վերաբերյալ՝ հաջորդ նիստում քննարկելու նպատակով:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

2020թ. դեկտեմբերի 3-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Ձայնագրության հղումը՝
https://drive.google.com/file/d/1Jf1r4laiL19lxjJ0zTNORCLguHq1aSeS/view?usp=sharing

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդների ատեստավորում
2. Ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման առկա վիճակի մասին
3. Ավարտական աշխատանքների և թեզերի կատարման վիճակի մասին
4. Մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների մասին
5. Միջանկյալ քննությունների հարցաշարերի նախապատրաստվածության ու անցկացման ձևի մասին
6. Դասախոսներին ուսանողների կողմից գնահատելու հարցաթերթիկների արդյունքների մասին
7. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 16 (տասնվեց) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի հայցորդների հաշվետվության մասին:

Ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանը ներկայացրեց իր կողմից կատարած աշխատանքները:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Մ.Երիցյանը, Ա.Բաբախանյանը, Ն.Կնյազյանը, Լ.Հաբարձումյանը:

Ամբիոնի հայցորդ Նարինե Ստեփանյանը ներկայացրեց իր կողմից կատարած աշխատանքները:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Տ.Թանգամյանը, Մ.Քոչարյանը, Ա.Զիրոյանը, Մ.Դալլաքյանը:

Ամբիոնի հայցորդ Արմենուհի Փիլթակյանը ներկայացրեց իր կողմից կատարած աշխատանքները:

Արտահայտվեց՝

Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Ա. Խաչիկյանին, Ն. Ստեփանյանին, Ա. Փիլթակյանին:

2. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման առկա վիճակի մասին: Դասախոսները համառոտ ներկայացրեցին իրենց կողմից անցկացվող դասերի ընթացքը, խնդիրները հիմնականում տեխնիկական էին, ուսանողների հաճախումը գտնվում է բավարար մակարդակի վրա:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ավարտական աշխատանքների և թեզերի կատարման վիճակի մասին: Դասախոսները տեղեկացրեցին, որ մի մասի մոտ փորձարարական աշխատանքներն ավարտված են, մի մասի մոտ փորձերն ընթացքում են, աշխատանքներ են տարվում գրական տվյալների հետ: Նշվեցին նաև առանձին դեպքեր, երբ ավարտական կուրսերի առանձին ուսանողներ դեռևս չեն սկսել աշխատել ավարտական աշխատանքների վրա կամ չեն դիմել իրենց ղեկավարներին՝ ավարտական աշխատանքների թեման ստանալու և համապատասխան աշխատանքներ կատարելու համար:

Որոշեցին՝

Ինտենսիվացնել կատարվող աշխատանքները և ուշադրություն դարձնել դրանց կատարման որակի վրա:

4. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների մասին: Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ պրակտիկայի իր խումբը կատարելու է յուրաքանչյուր դասի վերլուծություն, ինչպես նաև տեսանկարահանում են իրենց դասերն ու ներկայացնում, բացի այդ ուսանողները պատրաստվում են թղթապանակների պաշտպանության, որին ցանկալի կլինի, որ մասնակցեն ամբիոնի այն դասախոսները, որոնց մոտ դասավանդում են իրականացրել պրակտիկանտները: Վ.Հովսեփյանը տեղեկացրեց, որ իր խումբն անմիջապես սկսել է դասավանդումները, ուսանողները նախապատրաստել են առարկաներին վերաբերվող փոքր փաթեթներ: Պրակտիկայի առումով վիճակը բավարար գնահատվեց:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը միջանկյալ քննությունների հարցաշարերի նախապատրաստվածության ու անցկացման ձևի մասին: Ամբիոնի վարիչը նշեց, որ եթե հարցաշարերի առումով ինչ-որ մեկը բաց ունի, ապա անպայման կարճ ժամկետում

պետք է տեղադրի դասընթացներում: Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ ինքը միջանկյալ ստուգումներն անցկացնելու է բանավոր հարցման ձևով: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ դասախոսները կարող են ազատ լինել ստուգման ձևի ընտրության մեջ, որպեսզի լիարժեք կարողանան գնահատել ուսանողներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը դասախոսներին ուսանողների կողմից գնահատելու հարցաթերթիկների արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ ինչպես նախատեսված էր, ամբիոնը հարցում է անցկացրել ուսանողների շրջանում դասախոսների վերաբերյալ՝ համաձայն նախապես պատրաստված հարցաշարի և պատասխանների հղումն ուղարկվել է բոլոր դասախոսների էլեկտրոնային հասցեներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

7. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մոտավորապես 3 շաբաթ առաջ ամբիոն է ուղարկվել հայցորդ Նաիրա Մանվելյանի ատենախոսությունը նախապաշտպանության նպատակով և տրամադրվել է ամբիոնի դասախոսներին կարծիքի նպատակով:

Մասնագետները նշեցին, որ աշխատանքում կան թերություններ, որոնք պետք է շտկվեն:

Որոշեցին՝

Պատրաստել մեկ ընդհանուր կարծիք համապատասխան դիտողություններով հայցորդին տրամադրելու համար, որ ինքը կարողանա կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել աշխատանքը նախապաշտպանության:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2020թ. դեկտեմբերի 30-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Ձայնագրության հղումը՝ https://drive.google.com/file/d/1JY1Lw5f-zPL1ezMIKKI5XZTbhxM78Ywt/view?usp=sharing

Օրակարգ

1. Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի ստուգարքների, միջանկյալ քննությունների ընթացիկ իրավիճակի և ամփոփիչ քննությունների նախապատրաստման մասին
2. Հեռակա ուսուցման նախապատրաստական աշխատանքների մասին
3. Ամբիոնի դասախոսների հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին
4. Դասալսումների արդյունքների քննարկում
5. Առաջին կիսամյակում մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների ամփոփում
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առաջին կիսամյակի ստուգարքների, միջանկյալ քննությունների ընթացիկ իրավիճակի և ամփոփիչ քննությունների նախապատրաստման մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց դասավանդած առարկաների ընթացիկ ստուգումների վիճակը և հայտնեցին ամփոփիչ քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին: Դասախոսների կողմից նշվեցին որոշակի խնդիրներ, որոնցից էին մասնավորապես արտագրությունները: Նշվեց, որ աշխատանքներ են տարվում հնարավորինս դրանցից խուսափելու համար և գրավոր քննությունները բանավոր քննություններով փոխարինելու ուղղությամբ:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Տ. Թանգամյանը, Ա. Զիրոյանը, Ա. Բաբախանյանը, Ա.Կիրակոսյանը, Ռ.Սիմոնյանը, Վ. Հովսեփյանը, Լ.Համբարձումյանը, Մ. Դալլաքյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը հեռակա ուսուցման նախապատրաստական աշխատանքների մասին: Ամբիոնի վարիչը նշեց, որ հեռակայի դասացուցակներն ուղարկված են բոլոր դասախոսներին, ինչպես նաև անդրադարձավ անցկացված խորհրդատվական հանդիպումներին:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց ղեկավարած ավարտական աշխատանքների վիճակը: Բոլորի մոտ աշխատանքները գտնվում են բավարար վիճակում, ընթանում են ըստ նախտեսված պլանի: Ամբիոնի վարիչը նորից տեղեկացրեց դասախոսներին, որ եթե ղեկավարը չերաշխավորի իր դիպլոմնիկին մասնակցել պաշտպանության, ապա ամբիոնը ևս չի երաշխավորելու ուսանողին մասնակցել հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը դասալսումների արդյունքների մասին: Ս.Պիպոյանը հայտնեց, որ առաջին կիսամյակում կատարվել են դասալսումներ ըստ նախատեսված ժամանակացույցի, տրվել են համապատասխան կարծիքներ, ինչում մեծ ակտիվություն է ցուցաբերել ամբիոնի պրոֆեսոր Տ.Վ.Թանգամյանը: Ինչպես նաև Ս.Պիպոյանը տեղեկացրեց, որ 2-րդ կիսամյակում ևս կազմվելու է դասալսումների ժամանակացույց, նշելով որ դասալսումները պետք է ուղղված լինեն դասապրոցեսի կատարելագործմանը և կրթության որակի բարձրացմանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին՝

Առաջին կիսամյակում մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների ամփոփումը, որը ներկայացրեց Ռ.Սիմոնյանը:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը, Մ.Քոչարյանը, Ա.Կիրակոսյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ամբիոնի վարիչի կողմից դասախոսներին տրվող հանձնարարությունները պետք է կատարվեն հատկացված ժամկետում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

2021թ. փետրվարի 11-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Ձայնագրության հղումը՝
https://drive.google.com/file/d/1wKbGUTXp5C1Ip6gQ217OmmZEEI_UKVUx/view

Օրակարգ

1. Ուսուցանվող ակադեմիական գիտելիքների մակարդակի բարձրացման մասին, քննարկում և առաջարկություններ /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
3. Միջանկյալ և ամփոփիչ քննությունների մասին, խնդիրներ և լուծումներ /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
4. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտական աշխատանքների կատարման մասին
5. Առերես ուսուցման հնարավոր խնդիրների մասին
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 17 (տասնյոթ) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ուսուցանվող ակադեմիական գիտելիքների մակարդակի բարձրացման մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ ռեկտորատի նիստում քննարկվել է ակադեմիական գիտելիքերի հարցը: Ս.Պիպոյանը նշեց, որ ամբիոնների մեծ մասը չունի համապատասխան նյութատեխնիկական բազա, դասախոսներն աշխատում են բավականի խիտ գրաֆիկով, անհրաժեշտ է վերականգնել ուսումնական պրակտիկաները, քանի որ առանց դրանց, հատկապես կենսաբանների համար, ակադեմիական գիտելիքները լիարժեք չեն ստացվում և այլն:

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը նշեց, որ հարցն արդիական է և կարևոր.

- յուրաքանչյուր դասախոս պետք է իր վրա շատ աշխատի, գիտական, մեթոդական և այլ առումներով,
- անհրաժեշտ է ապահովել ուսանողների համապատասխան մակարդակը, քանի որ մագիստրատուրա ընդունվում են կենսաբանական բազային կրթություն

չունեցող ուսանողներ, բակալավրիատ սփյուռքից ընդունվում են ուսանողներ, որոնց գիտելիքները չեն բավարարում նվազագույն պահանջներին՝ դասագրքերի անհամապատասխանության պատճառով,

- վերականգնել ուսումնական պրակտիկաները,
- բացառել ավարտական աշխատանքների համատարած կատարումը և հանձնարարել դրանք լավագույններին, քանի որ ամեն ուսանող չէ, որ ունակ է կատարել նման աշխատանք,
- ապահովել համապատասխան նյութատեխնիկական բազայով հագեցած լաբորատորիաների առկայությունը:

Մ.Երիցյանը նշեց, որ դասախոսը պարտադիր պետք է ունենա լավ ակադեմիական գիտելիքներ, հետևի գիտության նորություններին և ինքը զբաղվի գիտությամբ՝ անկախ նրանից թե բուհն ինչ ուղղվածություն ունի: Մ.Երիցյանն առաջարկեց ուժեղացնել ուսանողական խորհրդի գիտական թևը, իրականացնել նախադիպլոմային աշխատանքներ և ուսանողներին մասնակցությունը գիտական աշխատանքներին, որոնցով կբարձրանա իրենց գիտական գիտելիքների մակարդակը և դրանք առավել կամրապնդվեն:

Ա.Առուստամյանն առաջարկեց ուժեղացնել կապը գիտահետազոտական ինստիտուտների հետ:

Ա.Բաբախանյանը կարևորեց անհատական աշխատանքներն ուսանողների հետ:

Ա.Կիրակոսյանն առաջարկեց խթանել ուսանողների ընթացիկ աշխատանքների կատարումը:

Ի.Սիրեկանյանն առաջարկեց փորձել ձեռք բերել նոր սերնդի սարքավորումներ՝ համապատասխան փորձերի իրականացման համար:

Վ.Հովսեփյանը, Ռ.Սիմոնյանը, Ն.Հարությունյանը համաձայնվեցին իրենց գործընկերների կողմից հնչեցրած խնդիրների և առաջարկությունների հետ ու իրենց կողմից առաջարկեցին համագործակցության պայմանագրեր կնքել համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների հետ, որի արդյունքում այդ հիմնարկները կվարձատրվեն իրենց տրամադրած ծառայությունների դիմաց:

Մ.Դալլաքյանն առաջարկեց, որ ուսանողները գիտահետազոտական ինստիտուտներում փորձեն աշխատել կամավորականության սկզբունքով, որի համար ինստիտուտը որևէ վարձատրություն չի պահանջի, ինչպես նաև առաջարկեց կազմակերպել օտար լեզվի ուսուցում՝ հոդվածների թարգմանության միջոցով:

Ս.Պիպոյանն առաջարկեց դասախոսներին, որ իրենց կողմից ուսանողներին հաղորդվող նյութը համապատասխանի գիտության արդի տվյալներին, խնդրեց դասախոսներին, որ յուրաքանչյուր դասին 10 րոպե տրամադրեն ուսանողներին գիտական նորություններին ծանոթացնելուն և քննարկումների կազմակերպմանը:

Ս.Պիպոյանը հանձնարարեց.

- դասախոսներին՝ ճշտել համագործակցության հնարավորությունները համապատասխան գիտական ինստիտուտների հետ,

- Ա.Փիլթակյանին՝ կազմել փոխադարձ դասալսումների ժամանակացույց և ներկայացնել հաստատման,
- դասախոսներին՝ իրականացված դասալման արդյունքում տրամադրած կարծիքում ներառել նաև ուսանողներին ներկայացված գիտական նուրությունների մասին տեղեկավությունը,
- դասախոսներին՝ վերանայել ուսանողներին տրամադրվող ուսումնական նյութերը՝ համապատասխանեցնելով դրանք գիտական արդի ձեռբերումներին:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն:

2. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ մարտի 10-ից նախատեսվում է իրականացնել նախապաշտպանություններ, կկազմվի ժամանկացույց առկա և հեռակա ուսուցման համակարգերի համար, որի համաձայն կիրականացվի այդ գործընթացը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը միջանկյալ և ամփոփիչ քննությունների մասին: Դասախոսները նշեցին, որ ոչրևէ խնդիր չի եղել միջանկյալների ժամանակ:

Արտահայտվեցին՝

Տ.Թանգամյանը, Ի.Սիրեկանյանը և Ն.Հարությունյանը տեղեկացրեցին ամբիոնի վարիչին, որ հեռակա բակալավրիատի «Շրջակա միջավայրի գիտություններ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները չեն մասնակցել առցանց դասերին: Ս.Պիպոյանը հանձնարարեց Ա.Փիլթակյանին իր անունից պատրաստել զեկուցագիր դեկանի անունով՝ բարձրացված խնդրի մասին:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտական աշխատանքների կատարման մասին: Ամբիոնի վարիչը հորդորեց դասախոսներին ուշադրություն դարձնել իրենց գիտական գործունեության վրա, ինչպես նաև հետևել գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարվող մրցույթներին և փորձել մասնկանցել դրանց՝ կազմելով համապատասխան գիտական խմբեր:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առերես ուսուցման հնարավոր խնդիրների մասին: Դասախոսները տեղեկացրեցին, որ եղել են ընթացիկ խնդիրներ, որոնք ստացել են իրենց լուծումները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

2021թ. մարտի 10-ի, 18-ի, 22-ի, 25-ի, 26-ի, 29-ի, 30-ի և 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Մարտի 29-ի, 30-ի և 31-ի նիստերի ձայնագրությունների հղումները՝

1. https://drive.google.com/file/d/1wKbGUTXp5C1Ip6gQ217OmmZEEI_UKVUx/view
2. https://drive.google.com/file/d/1PjJDET4bzchOuO4nuCIhDJL546neOLIx/view
3. https://drive.google.com/file/d/18NiQ4wzeQhLuDGPHEwizLXGxHTxCw4Bn/view

Օրակարգ

1. Դասերին ուսանողների հաճախումների և կարգապահական խնդիրների մասին
2. 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին
3. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության 1-ին փուլ
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը դասերին ուսանողների հաճախումների և կարգապահական խնդիրների մասին: Ս.Պիպոյանը հայտնեց, որ դասախոսները պետք է վերահսկեն ուսանողների հաճախումները՝ կապված համաճարակային իրավիճակի հետ և փորձեն առավելագույնս ապահովել կարգապահությունն ուսանողների շրջանում ինչպես դասերին, այդպես էլ դասերից դուրս:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին: Դասախոսները տեղեկացրեցին, որ նախապատրաստված են ընթացիկ ստուգումների համար նախատեսված տոմսերը, ուսանողներին ուղարկված են համաատասխան ուսումնական նյութերը:

Որոշեցին՝

Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների տոմսերը:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունների առաջին փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ, առաջին փուլից հետո միանգամից կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 20 և մագիստրատուրայի թվով 15 ուսանողները ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ, լրացումներ և համապատասխանեցում ներկայացվող պահանջներին:

Առկա բկալավրիատի Կենսաբանություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողնուհի Ժաննա Խաչատրյանը նախապաշտպանության չէր ներկայացել:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 14 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության.
  - ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Կարինե Ավետիսյան
2. Լիլիթ Գրիգորյան
3. Քնարիկ Համբարձումյան
4. Աքսաննա Մալխասյան
5. Հեղինե Ստեփանյան
6. Հայկանուշ Վարդանյան
7. Քնարիկ Վարդանյան
8. Անուշ Պալյան
9. Արմիդա Վարդանյան
10. Արփինե Զարգարյան
11. Աստղիկ Խեչոյան
12. Սոնա Նիկոլայան
13. Սվետլանա Ցոցիկյան

  - ✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Լիլիթ Երմալովյան

- Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 13 ուսանողի մագիստրոսական թեզ երաշխավորել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Սոնյա Վարդանյան
2. Նվարդ Հայրումյան
3. Նուբար Զախարյան
4. Վարդուհի Պողոսյան
5. Լիլիթ Բակումյան
6. Աստղիկ Գրիգորյան
7. Անահիտ Կարապետյան
8. Անուշ Ասատրյան

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Արմինե Հակոբյան
2. Ագապի Անտոնյան
3. Տաթևիկ Հովհաննիսյան
4. Սվետլանա Սարգսյան
5. Արմինե Գևորգյան

- Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 6 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել նախապաշտպանության 2-րդ փուլ.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Իրինա Աղասարյան
2. Արմանուշ Ասատրյան
3. Անի Հարությունյան
4. Սուսան Պետրոսյան
5. Վիկտորյա Հարությունյան

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Լիլիթ Գևորգյան

- Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 2 ուսանողի մագիստրոսական թեզ երաշխավորել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Կարեն Ժամհարյան

✓ **Քիմիա» մասնագիտություն**

1. Նաիրա Բաղդասարյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N7

2021թ. ապրիլի 12-ի, 13-ի, 14-ի, 15-ի, 16-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Նիստերի ձայնագրությունների հղումները՝

1. https://drive.google.com/file/d/1yE9NkU4tecgOkGsWpZytRJ_nSiRnd3HY/view
2. https://drive.google.com/file/d/1oCvnqK4UjTzQl-ckddxbHi6J7G3NFWxa/view
3. https://drive.google.com/file/d/1VT6K8OWMPazzlDSRSW_osQsbebvE1a62/view
4. https://drive.google.com/file/d/1Dr2tuwEwQ1p19AAR-LxDfElJuw-4BZQL/view
5. https://drive.google.com/file/d/1UiFLA1ugL4KWKxivkia14-09vwgxtu0T/view

Օրակարգ

1. Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության 1-ին փուլ
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 10 (տասը) անդամ: Նիստին ներկա էին նաև ուսանողներ, որոնք հետևում էին նախապաշտպանության գործընթացին:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության առաջին փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ, առաջին փուլից հետո միանգամից կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի հեռակա բակալավրիատի թվով 21 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ, լրացումներ և համապատասխանեցում ներկայացվող պահանջներին:

Կենսաբանություն մասնագիտության նախորդ տարվա ուսանողնուհի Նանար Ներսիկի Գորանցյանը, ում աշխատանքը 2019-2020 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանության ժամանակ չէր երաշխավորվել հրապարակային պաշտպանության, նախապաշտպանության չէր ներկայացել:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 8 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Քրիստինե Անդիկյան
2. Նարինե Հայրապետյան
3. Աննա Մանուկյան
4. Տաթև Սերոբյան
5. Ալվարդ Վարդանյան
6. Դիանա Խաչատրյան
7. Դարեջան Հովհաննիսյան

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Եղիսաբեթ Հարությունյան

- Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 13 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել նախապաշտպանության 2-րդ փուլ.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Գոհար Մաչյան
2. Եսթեր Սարգսյան
3. Մանուշակ Սարգսյան
4. Ջուլիետա Վերդյան
5. Հասմիկ Ղարագյոզյան
6. Հերմինե Լազարյան
7. Հերիքնազ Ներսիսյան
8. Սուսաննա Ոսկանյան
9. Նաիրա Միրզոյան

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Դոնարա Մեհրաբյան
2. Տաթևիկ Հեպինյան
3. Եվգենյա Հակոբյան
4. Լուսինե Մարգարյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

2021թ. ապրիլի 27-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ու մանկավարժության ամբիոնների համատեղ ընդլայնված նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդ Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեկնածուական ատենախոսության քննարկում (աշխատանքին կարելի է ծանոթանալ ամբիոնում):
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեցին կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ու մանկավարժության ամբիոնների վարիչներ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը և մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Թոփուզյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ու մանկավարժության ամբիոնների 20 (քսան) անդամ (ցանկը կցվում է): Նիստին ներկա էին նաև կենսաբանության, քիմիայի և աշարհագրության ֆակուլտետի դեկան Ռ.Սադոյանը,թեկնածուական ատենախոսության ղեկավար Լ.Սահակյանը:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի և Ա.Թոփուզյանի հաղորդումն առ այն, որ քննարկման է ներկայացվում կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթդիկայի ամբիոնի հայցորդ Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեկնածուական ատենախոսությունը: Խոսքը տրամադրվեց ատենախոսին: Ն.Մանվելյանը ներկայացրեց իր կողմից կատարված աշխատանքը:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս.Պիպոյանը, Ա.Թոփուզյանը, Տ.Թանգամյանը, Մ.Երիցյանը, Ա.Առուստամյանը, Ի.Սիրեկանյանը, Գ.Եգանյանը և Գ.Հարությունյանը:

Ատենախոսին ներկայացվեցին աշխատանքում տեղ գտած թերությունները և առաջարկվեց տվյալ քննարկումը համարել վերջինը, որին համապատասխան շտկումներ և ուղղումներ կատարելուց հետո կհաջորդի նախապաշտպանությունը: Առաջարկությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

Քվեարկություն՝

Կողմ-19

Դեմ-0

Ձեռնպահ-1

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով թեկնածուական ատենախոսության քննարկումը համարել վերջինը և դրա մեջ անհրաժեշտ շտկումներ ու ուղղումներ կատարելուց հետո միայն աշխատանքը ներկայացնել նախապաշտպանության:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9

2021թ. մայիսի 4-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանության 2-րդ փուլ
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների և մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության երկրորդ փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրենի իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 8 և մագիստրատուրայի թվով 2 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Կենսաբանություն մասնագիտության 2019-2020 ուսումնական տարվա ուսանողնուհի Նանար Ներսիկի Գորանցյանը, 2020-2021 ուստարում նախապաշտպանության չէր ներկայացել:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 7 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Իրինա Աղասարյան
2. Արմանուշ Ասատրյան
3. Անի Հարությունյան
4. Սուսան Պետրոսյան
5. Վիկտորյա Հարությունյան
6. Ալյոնա Մակիչյան

- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**
    1. Լիլիթ Գևորգյան
- Առկա բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 1 ուսանողի ավարտական աշխատանք չերաշխավորել հրապարակային պաշտպանության՝ ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին և բովանդակային առումով չհամապատասխանելու պատճառով.
    1. Ժենյա Համբարյան
- Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 2 ուսանողի մագիստրոսական թեզ երաշխավորել հրապարակային պաշտպանության.
- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**
    1. Կարեն Ժամհարյան
- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**
    1. Նաիրա Բաղդասարյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10

2021թ. մայիսի 11-ի և 13-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերի

Օրակարգ

1. Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության 2-րդ փուլ
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրեցին իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 13 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 11 ուսանողի ավարտական աշխատանք երաշխավորել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Գոհար Մաչյան
2. Մանուշակ Սարգսյան
3. Ջուլիետա Վերդյան
4. Հերիքնազ Ներսիսյան
5. Սուսաննա Ոսկանյան
6. Նաիրա Միրզոյան

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Դոնարա Մեհրաբյան
2. Տաթևիկ Հեպինյան
3. Եվգենյա Հակոբյան

4. Լուսինե Մարգարյան

- «Կենսաբանություն» մասնագիտության հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողներ Հերմինե Լազարյանի և Եսթեր Սարգսյանի ավարտական աշխատանքները չեն կարող երաշխավորվել հրապարակային պաշտպանության, քանի որ նշված ուսանողները ստացել են անբավարար գնահատական մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունից:
- Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով -- ուսանողի ավարտական աշխատանք չերաշխավորել հրապարակային պաշտպանության.

«Կենսաբանություն» մասնագիտություն

1. Հասմիկ Ղարագյոզյան

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

2021թ. հունիսի 16-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերի

Օրակարգ

1. Ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին
2. 2021-2022 ուսումնական տարվա ծանրաբեռնվածության մասին
3. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ) անդամ:
Նիստին ներկա էր նաև կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան Ռ.Սադոյանը:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման արդյունքում ուսանողների ստացած գնահատականների վիճակագրությունը:

ԿՔԱ ֆակուլտետի դեկան Ռ.Սադոյանը հորդորեց դասախոսներին առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական աշխատանքների թեմաների ընտրության արդիականության վրա՝ կրկնողություններից խուսափել, աշխատանքները ձևակերպել ըստ ընդունված ձևաչափի, փորձերի և գործնական աշխատանքների ընթացքը պլանավորել այնպես, որ ուսանողները հասցնեն դրանք ավարտել սահմանված ժամկետներում, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնել վիճակագրական տվյալների ստացման և մշակման վրա:

Ամբիոնի վարիչը նույնպես մատնանշեց և մանրամասնեց վերոգրյալ խնդիրները: Ս.Պիպոյանն առաջարկեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության 2-րդ փուլի ժամանակ կազմակերպել նաև ուսանողների կենսաբանական և քիմիական գիտելիքների ատեստավորում: Բացի այդ ամբիոնի վարիչը հորդորեց դասախոսներին մեծ ուշադրություն դարձնել կուրսային աշխատանքների կատարման վրա և փորձել դրանք հիմք դարձնել ավարտական աշխատանքի համար: Ս.Պիպոյանի կողմից նաև հնչեց առաջարկություն, որ եթե ուսանողը պարտք ունի մի առարկայից, որը հիմք է հանդիսանում մեկ այլ առարկայի ուսումնասիրման համար, ապա չթույլատրել ուսանողին շարունակել ուսումնառությունը՝ մինչև պարտքը չհանձնի մինչև մյուս առարկայի ուսումնասիրումը:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Ա.Զիրոյանը, Ռ.Սիմոնյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա ծանրաբեռնվածության մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ նախորդ ուսումնական տարվա հետ համեմատ եղել է ամբիոնի ընդհանուր ժամաքանակի նվազում, որը կազմել է 1139 ժամ, ուստի դասաբաշխման առումով կարող են լինել մասնակի փոփոխություններ:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ ստուգումների և բանավոր քննությունների տոմսերի մասին:

Որոշեցին՝

Հաստատել 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի միջանկյալ և բանավոր ստուգումների տոմսերը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N12

2021թ. օգոստոսի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերի

Օրակարգ

1. Դասախոսների բեռնվածությունը նոր ուսումնական տարում
2. Դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակումները և տեղադրումը էլեկտրոնային հարթակում
3. Ավարտական աշխատանքների իրականացման կազմակերպական հարցերը և առկա վիճակը
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 14 (տասնչորս) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը նոր ուսումնական տարում դասախոսների բեռնվածության մասին: Ս.Պիպոյանը խնդրեց ամբիոնի մասնագետ Ա.Փիլթակյանին ներկայացնել յուրաքանչյուր դասախոսի ժամաքանակն ըստ դասաբաշխման (բեռնվածությունը կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակման և տեղադրման մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ նյութերը պետք է տեղադրված լինեն սահմանված ժամկետներում, համապատասխանեն արդի պահանջներին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում դասավանդվող առարկաների նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը, ինչպես նաև տեղեկացրեցին, որ նյութերի մեծ մասը տեղադրված է, աշխատանքներն ընթացքի մեջ են:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը:

3.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ավարտական աշխատանքների իրականացման կազմակերպական հարցերի և առկա վիճակի մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ բացի ավարտական աշխատանքների նախնական պաշտպանության իրականացվելու է նաև ուսանողների մասնագիտական գիտելիքների ստուգում, որը հաղթահարելու դեպքում նոր ուսանողները կթույլատրվեն հրապարակային պաշտպանության: Ամբիոնի վարիչը հանձնարարեց դասախոսներին ներկայացնել քննական հարցեր՝ իրենց մասնագիտական ոլորտից, որպեսզի դրանցից ընտրվեն համապատասխան հարցերը և ձևավորվի մասնագիտական քննական հարցաշար:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

4.Լսեցին՝

Ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանի գիտական ղեկավար նշանակելու հարցը: Նշվեց, որ Լ. Հակոբյանի գիտակա ղեկավարը պետք է համապատասխանի ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, որին այսօր համապատասխանում է միայն մանկ. գիտ. դոկտոր Լիդա Սահակյանը:

Որոշեցին՝

Մանկ. գիտ. դոկտոր Լիդա Սահակյանի թեկնածությունը ներկայացնել ՀՊՄՀ գիտական ստորաբաժանում՝ Լիլիթ Հակոբյանի գիտական ղեկավար նշանակելու համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ՓԻԼԹԱԿՅԱՆ**